


ХРРЕСТЬЯНСКАЯ
Sazema

ԽՈՐՀՐԴՅՈՒՆ
ՀԱՅԵՍՏԱՆ

ԿՈՒՆՏԱՆՏԻՆՍԻ
ՅԵՎ ԲՐԻԳԱԴԱՅԻՆ
ՊԱՅԻ ԹԵՐՈՒՆԻ
ԽՍԲԱԳԻՐՆԵՐԻ
Հ Է Բ Ա Կ Ա
ԴԱՍԵՆԹԱՅՆԵՐ

ԱՄԵՆԱԴԵՄՈԿՐԱՏԻԿ
ԸՆՏՐԱԿԱՆ ՈՐԵՆՔԸ

(ՀԱՏՎԱԾ 7-ՐԻ ԴԱՍԱՆՈՍՈՒԹԵՈՒՆԻՑ)



Հ Կ (Բ) Կ Կ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
"ԽՈՐՀՐԴՅՈՒՆ
Չ ՀԱՅԵՍՏԱՆ"
ՍԵՐԵԿՄԵ 1937 թ.

„ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ“-Ի ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Կոլտնտեսային և բրիգադային պատի քերթերի խմբագիրների հեռակա ուսուցման դասընթացների 7-րդ դասախոսությունը, վարն այժմ գտնվում է տպագրության պրոցեսում, նվիրված է Ստալինյան Սահմանադրությանը և պատի քերթի խնդիրներին: Այդ դասախոսության մեջ հատուկ տեղ է տրված ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ընտրությունների կանոնադրության պարզաբանմանը: Դասախոսության այդ մասը, վարն հենց այժմ անհրաժեշտ է մեր հեռակայողներին և պատի քերթերի աշխատողներին, «Խ. Հ.»-ի խմբագրությունն անհրաժեշտ գտավ տպագրել առանձին և ուղարկել տեղերին: Ներկա դասախոսությունն իր մեջ բնդրվում է հենց այդ նյութը:

Անկասկած, մեր հեռակայողները, պատի քերթերի բոլոր աշխատողներն ու քղբակիցները Գերագույն Խորհրդի ընտրությունների առթիվ իրենց կատարելիք աշխատանքի ընթացքում չպետք է սահմանափակվեն միայն ներկա բրոշյուրի մեջ յեղած նյութով:

Ընտրական նոր որեմքը մասսաներին բացատրելու հետ մեկտեղ, անհրաժեշտ է պատի քերթերում բուշվիկյան լայն ագիտացիա ծավալել հատկապես Գերագույն Խորհրդի պատգամավորի քեկնածուներ առաջադրված ընկերների մասին, պարզաբանել և յուրաքանչյուր ընտրողի սեփականությունը դարձնել լենինի-Ստալինի կուսակցությանն անսահմանորեն նվիրված, ժողովրդի այդ արժանավոր գավակների հերոսական կյանքն ու գործունեությունը:

Խմբակիների և հեռակայողների վրա պարտականություն է դրվում՝ կոլեկտիվ ընթերցանության միջոցով այս նյութը դարձնել լայն մասսաների սեփականությունը:

ԱՄԵՆԱԴԵՄՈՎՐԱՏԻԿ ԸՆՏՐԱԿԱՆ ՈՐԵՆՔԸ

Յուրաքանչյուր պատի քերթի խմբագիր իհարկե, արդեն կարդացել է «ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ընտրությունների կանոնադրությունը», վոր հաստատվել է ԽՍՀՄ կենտրոնական Գործադիր Կոմիտեի 4-րդ նստաշրջանում և այժմ հանդիսանում է մեր յերկրի անաստան ընտրական որենքը:

Ինչպես ԽՍՀՄ-ի Ստալինյան Սահմանադրությունն աշխարհում ամենադեմոկրատականն է, այնպես էլ ամենադեմոկրատականն է մեր նոր ընտրական որենքը: Յեվ այդ հասկանալի յե: Խորհրդային ընտրական որենքը Ստալինյան Սահմանադրության ծնունդն է: Նա վոչ միայն ընտրական իրավունքներ է տալիս Խորհրդային Միության բոլոր քաղաքացիներին, այլ և ստեղծում է բոլոր անհրաժեշտ պայմանները, վորպեսզի նրանք կարողանան գործնականում իրականացնեն այդ իրավունքները և ակտիվորեն մասնակցեն ընտրություններին:

Մեր ընտրական որենքն իր մեջ ունի շատ այնպիսի բաներ, վոր ընտրական սիստեմների բուրժուական մասնագետները յերազեղ անգամ չհյին կարող: Խորհրդային ընտրական որենքի նույնիսկ այն հոգվածները, վորոնք առաջին հայացքից կարծես թե վերցրված են հին դեմոկրատական փորձից, իրականում հանդիսանում են բոլորովին նոր բան:

Որինակ, վերցնենք ԽՍՀՄ-ի Սահմանադրությամբ սահմանված բնդնաճուր ընտրական իրավունքը: Նա պաշտոնապես գոյություն ունի շատ բուրժուական ընտրական սիստեմներում: Սակայն բուրժուական պետություններում այդ իրավունքը միայն թղթի վրա գոյություն ունի: Իրականում կապիտալիստական պետություններն ընտրական որենքով ամենաբաղձալիս պատճառներով աշխատավորությունը զրկում են ընտրությունների մասնակցելու իրավունքից:

Առաջին սահմանափակումը գույքային ցենզն է. ընտրող-
ներից պահանջվում է, վոր նրանք վորոշ սեփականություն տեր
լինեն: Վորոշ յերկրներում ընտրական իրավունքից զուրկ են
անանկացած պարտատերերը — դրանք քայքայված միջակներն ու
չքայքայվածներն են:

Յեկրորդ սահմանափակումը հասակն է: Վորպես կանոն
բուրժուական յերկրներում ընտրություններին մասնակցելու
իրավունք ունեն 24—25 տարին լրացրած քաղաքացիները: Ըստ
մի քանի ամենադեմոկրատիկ բուրժուական սիստեմների ընտրողը
կարող է և 25 տարեկանից փոքր լինել, սակայն նա վոչ մի
դեպքում պատգամավոր լինել չի կարող: Պատգամավորն ան-
պայման պետք է լինի 30 տարեկան կամ ավելի մեծ: Մեզ մոտ
ԽՍՀՄ-ում ընդհանրապես չկա ընտրական իրավունքի բաժա-
նում միայն ընտրելու իրավունքի (ակտիվ ընտրական իրավունք)
և ընտրվելու իրավունքի (պասսիվ ընտրական իրավունք)

Յերրորդ սահմանափակումը նստակեցության ցենզն է: Կա-
պիտալիստական պետություններում ընտրություններին մաս-
նակցելու իրավունքից զրկվում են այն քաղաքացիները, վորոնք
տվյալ վայրում վորոշ ժամանակամիջոցից պակաս են ապրում:
Հասկանալի չէ, վոր այդ սահմանափակումը տարածվում է գլխա-
վորապես բանվորների ու բաղադրողների վրա, վորոնք աշխա-
տանք վորոնքով ստիպված են տեղից տեղ թափառել:

Չորրորդ սահմանափակումը կրթական ցենզն է: Այդ նշա-
նակում է, վոր ընտրելու իրավունք ունի միայն վորոշ կրթու-
թյուն ստացած անձնավորությունը:

Հինգերորդ սահմանափակումը զինվորականներին և ուսա-
նողներին ընտրական իրավունքներից զրկելն է:

Վեցերորդ սահմանափակումը մի շարք բուրժուազեմոկրա-
տական յերկրներում կնոջն ընտրական իրավունքներից զրկելն է:

Յոթերորդ սահմանափակումը մի շարք բուրժուական պե-
տություններում աղքատի փոքրամասնություններին ընտրա-
կան իրավունքներից զրկելն է: Ընտրական իրավունքներից
զուրկ են գաղութների հարյուր միլիոնավոր աշխատավորներ:

Այս դեռ լրիվ ցուցակ չէ կապիտալիստական յերկրներում
աշխատավորության ընտրական իրավունքների սահմանափակման
Սակայն այսօրանն էլ բավական է համոզվելու համար, թե վոր-
քան սուտ և կեղծ են այն բոլոր իբր թե դեմոկրատական սիս-
տեմները, վորոնցով հպարտանում են բուրժուական պետու-

թյունների ներկայացուցիչները: Ընդհանուր ընտրական իրա-
վունքը կապիտալիստական պետություններում հանդիսանում է
մի շիրմա, վորի հետքը թաղնված իրականում վորպես «ժողովրդի
ընտրյալներ» իշխանության գլուխ և անցնում տերերի՝ կա-
պիտալիստների ու կալվածատերերի մի խմբակ: Նրանք աշխա-
տավոր մասսաներից վախենում են ինչպես կրակից և ձեռք են
առնում բոլոր հնարավոր միջոցները, վորպեսզի բոլոր միջոցներով
կրճատեն ընտրություններին մասնակցելու աշխատավորության
իրավունքները: Մասսաների հանդեպ ունեցած այդ սարսափը
հանդիսանում է բոլոր բուրժուական ընտրական որենքների
հիմնական գիծը:

Բոլորովին այլ բան է մեզ մոտ:

Տասնութ տարին լրացրած յուրաքանչյուր Խորհրդային
քաղաքացի ընտրող է և պատգամավորության հնարավոր թեկ-
նածու: Մեր ընտրական որենքը կառուցված է դեպի ժողովրդա-
կան մասսաները յեղած անսահմանափակ վստահության վրա
և համակված է մեծագույն հոգատարություն դեպի մեր հայրե-
նիքի քաղաքացին: Սոցիալիստական յերկրի ընտրական որենքը
բացասում է վորեւ մեկին, ինչ ձևով էլ վոր այդ լինի, ընտրու-
թյուններից զրկելու հնարավորությունից, բացի այն անձերից,
վորոնք դատարանով զրկված են ընտրական իրավունքից և բացի
խեղադրանքներից: Նա ընտրողներից նստակեցության վսրե ցենզ
չի պահանջում: Իր բնակության վայրը փոխած քաղաքացուն
հնարավորություն է տրվում ընտրություններին մասնակցելու
«ձայնի իրավունքի վկայականով», վոր տրվում է նրան իր նա-
խորդ բնակավայրի պատգամավորների խորհրդի կողմից (ԽՍՀՄ
Գերագույն Խորհրդի ընտրությունների կանոնադրության 15-րդ
և 79-րդ հոդվածները):

Մեր ընտրական որենքը բոլորովին բացասում է գույքային
ցենզի վորեւ պահանջ և վորեւ մեկին աղքատի անհատա-
կության համար ընտրությունից զրկելու հնարավորություն:

Ընտրական որենքը Կարմիր բանակում յեղող անձանց հա-
մար ապահովում է ընտրություններին մասնակցելու և ընտրվե-
լու լիակատար հնարավորություն: Կանայք մեզ մոտ ողջվում
են ընտրելու և ընտրվելու իրավունքով՝ աղամարդկանց հետ
հավասար:

Ընտրական որենքն ուշադիր է դեպի յուրաքանչյուր առան-
ձին ընտրողը: Որենքը Գերագույն Խորհրդի ընտրություններին



11-2901491

մասնակցելու հնարավորություն է ապահովում նույնիսկ ԽՍՀՄ-ի այն քաղաքացիների համար, վորոնք ընտրությունների որը նա-վարկություն մեջ են գտնվում: Յեթե նալի վրա 50-ից վոչ պա-կաս ընտրողներ կան, նրանք կարող են կազմել առանձին ընտ-րական շրջան, վոր կմտնի նալի նշանակման ընտրական ոկ-րուդի մեջ: Որենքը նկատի յե առնում նաև ալն քաղաքացիներին, վորոնք իրենց առողջական վիճակի պատճառով հնարավո-րություն չեն ունենալու ընտրական շրջանը գալու: 33-րդ հոդ-վածը հատկապես նշում է, վոր հիվանդանոցներում, ծննդատնե-րում, սանատորիաներում, հաշմանդամների տներում, վորոնք առնվազն 50 ընտրող ունեն, ստեղծվում են առանձին ընտրական շրջաններ: Այսպիսով, մեր ընտրական սխեմմը իրականում ա-պահովում է ձայնի իրավունք ունեցող բոլոր քաղաքացիների մասնակցությունն ընտրություններին:

Վերջապես ընտրական որենքը նախատեսում է մի շարք կայուն ապահովություններ՝ ընտրողների համար. ընտրություն-ներից 30 որ առաջ ընտրողների ցուցակները կախ տալը, վոր-պեսզի բոլորը իմանան և ստուգեն (հոդված 13-րդ), վոչ ավելի, քան 3 որվա ընթացքում քաղաքացիների բոլոր բողոքների լու-ծումը՝ ընտրողների ցուցակում յեղած անճշտությունների մա-սին (հոդված 16-րդ, 17-րդ, 18-րդ և 19-րդ):

Ընդհանուր ընտրական իրավունքն իսկական ընդհանուր ապահովված որենք է հանդիսանում միայն մեր յերկրում: Այդպի-սի իսկական ընդհանուր ընտրական իրավունք չկա վոչ մի բուրժուա-դեմոկրատական պետությունում:

Կամ վերցնենք հավասար ընտրական իրավունքը, վոր սահ-մանված է ԽՍՀՄ-ի Սահմանադրությամբ: Միության Խորհրդի և Ազգությունների Խորհրդի ընտրությունների ժամանակ ընտ-րական որենքն ապահովում է բանվորի ու գյուղացու ձայնի հավասարությունը: Միության Խորհրդի ընտրությունների ընտ-րական ոկրուդը կազմվում է հետևյալ սկզբունքով. յուրաքան-չյուր ոկրուդին 300 հազար բնակչություն՝ հավասարապես քա-ղաքի ու գյուղի համար: Յուրաքանչյուր ընտրական ոկրուդ ու-ղարկում է մեկ պատգամավոր: Պատգամավորության թեկնածուն կարող է քվեարկվել միայն մեկ ոկրուդում: Ընտրողներից վոչ վոք չի կարող մտցվել ավելի քան մեկ ընտրական ցուցակի մեջ:

Իսկ ինչպիսի է հավասար ընտրական իրավունքի գործը մարժուա-դեմոկրատական պետություններում: Բուրժուա-դե-

մոկրատական պետությունների ընտրական սխեմմում այդ իրա-վունքը ձևականորեն հիշատակվում է, սակայն իրականում նրա-նից մնում են միայն վոդորմելի փշրանքներ: Այդտեղ շատ խո-րամանկություններ են հնարվել: Նշենք թեկուզ ընտրական ոկ-րուդներ ստեղծելու կարգը:

Ֆրանսիայում և Անգլիայում պրոլետարական բնակչու-թյամբ արդյունաբերական ոկրուդները պարլամենտին շատ ավելի քիչ թվով պատգամավորներ են տալիս, քան քաղաքային ու գյուղական բուրժուազիայի ոկրուդները: Որինակ՝ Ֆրանսիայում Փարիզի 6-րդ բուրժուական ոկրուդի առաջին շրջանը 8 հազար ընտրողներով ուղարկում է մեկ պատգամավոր, մեկ պատգա-մավոր է ուղարկում նաև Կորբեյի ոկրուդի 2-րդ շրջանը, վոր գտնվում է Փարիզի պրոլետարական արվարձանում, 50 հազար ընտրողների կողմից:

Անգլիայում, մեկական ներկայացուցիչ տվող ոկրուդների կողքին կան 18 ոկրուդ, վորոնք պալատին յերկուական ներկա-յացուցիչ են տալիս և մեկ ոկրուդ, վորը յերեք ներկայացուցիչ է տալիս: Անգլիայի վորոշ քաղաքներ պարլամենտում իրենց ներկայացուցիչը չունեն, պատգամավոր ուղարկում են այդ քա-ղաքների առանձին բուրժուական թաղամասերը:

Ամերիկայի Միացյալ Նահանգներում (ԱՄՆ) յուրաքանչյուր նահանգ (մարզ) սենատին տալիս է յերկու պատգամավոր: Սա-կայն, նահանգների բնակչությունը շատ բազմազան է: Յեմ ալն-պես և ստացվում, վոր 100 հազար բնակչություն ունեցող նա-հանգն ել սենատում նույնքան պատգամավոր ունի, վորքան Նյու-Յորքը, վոր 7 միլիոն բնակիչ ունի: Այսպիսով, ըստ ընտրա-կան մեքենայության 100 հազար ընտրողները հավասարվում են 7 միլիոնին: Իսկ այդպես է ստացվում նրա համար, վոր ընտրա-կան առավելություններով դժաված են բուրժուական շրջան-ները, իսկ շատ մեծ թվով պրոլետարական բնակչություն ունեցող արդյունաբերական կենտրոնների իրավունքները խուզված են:

Անգլիայում մոտ կես միլիոն հարուստներ յերկուական ձայն ունեն-մեկը բնակավայրում, մեկը այն վայրում, վորտեղ դա-նվում է նրանց ձեռնարկությունը կամ հոդը: Այսպես է վոչն-չանում ընտրությունների հավասարությունը բուրժուա-դեմոկրա-տական յերկրներում:

Խորհրդարին ընտրական որենքն ապահովում է ուղղակի ընտրական իրավունք, այսինքն՝ պատգամավորների ընտրու-թյուն

ուղղակի ընտրութեան միջոցով: Յուրաքանչյուր ընտրող անմիջականորեն ձայն է տալիս ինչպես Միութեան խորհրդի, այնպես էլ Ազգութեանների խորհրդի պատգամավորի այս կամ այն թեկնածուին Այդ տեսակետից մեր ընտրական որենքը խիստ տարբերվում է մի շարք բուրժուա-դեմոկրատական յերկրների ընտրական կարգերից, վորոնք սովորաբար պալատներից մեկը կադմակերպում են վոչ դեմոկրատական ճանապարհով: Այսպես, որինակ, ուղղակի ընտրութեանների կարգով չի ընտրվում ֆրանսիայի յերկրորդ պալատը—սենատը:

Անգլիայում յերկրորդ պալատը (լորդերի պալատ) բաղկացած է մեծ մասամբ հարուստներից, գործարանատերերից, խոշոր հողատերերից և արեստոկրատներից, վորոնք նեաճակովի յեն, կամ պալատում տեղ են ստանում ժառանգաբար:

Սորհրդային ընտրական որենքն ապահովում է ընտրութեաններին քվարկութեան գաղտնիութեամբ: Սա խիստ կարևոր մոմենտ է: Բուրժուական ընտրական կարգերում քվարկութեան գաղտնիութեանը կատարյալ աչկակապութեան է: Գաղտնի քվարկութեան գլխավոր խնդիրն է՝ ապահովել ընտրողի լիակատար անկախութեանը: Սակայն կապիտալիստական պետութեաններում այդ բանը չկա և չի կարող լինել: Հյուսիսային Ամերիկայի շատ նահանգներում (մարզերում) ընտրական ձայները համարյա բացարձակ վաճառվում ու գնվում են իրար թշնամի բուրժուական կուսակցութեանների կողմից:

Ճապոնիայում ընտրութեաններին ժամանակ հանդիպել են այսպիսի հայտարարութեաններ «Հարկավոր է 100 ձայն 50 ինքով»:

Կոմունիզմը համակրելու մեջ կասկածիլ ընտրողներին ծեծում են և ընտրական բյուլետենը թոււմ ձեռքից: Ընտրական շրջանների վրա կատարվող հարձակումները և կաշառված բանդաների կողմից ջարդ ու փշուր անելը ամենեին բացառիկ յերկվոյթներ չեն բուրժուական յերկրներում, ընտրութեանների ժամանակ: Բոլորին հայտնի յեն, որինակ, այսպիսի դեպքեր, յերբ Հյուսիսային Ամերիկայի Չիկագո խոշոր քաղաքում ընտրական շրջանները բանդիտների կողմից գնդացրային գնդակոծման և յենթարկվել, յերբ Չիկագոյի արվարձաններից մեկում կողոպտիչների բանդան տերրորի ու բռնութեան միջոցով քաղաքային խորհրդի մեջ է անցկացրել քրեական հանցագործների մի խումբ:

Բուրժուական կուսակցութեաններին նշանակած մարդիկ վոչ մի խարդախութեան առաջ կանգ չեն առնում: Կապոցներով քվեա-

տուփի մեջ են գցվում այն կուսակցութեան բյուլետենները, վոր տվյալ ոկրուգում իշխանութեանն իր ձեռքն է գցել: Բանվորների առաջադրած թեկնածութեանների անուններով իսկական բյուլետենները վոչնչացվում են և փոխարինվում կեղծ բյուլետեններով: Ձայները հաշվելու գործում ամենալիտի խարդախութեանն է տիրում:

Ընտրողների դեմ տերորն առանձնապես լայնորեն գործադրվում է ֆաշիզմի յերկրներում-Գերմանիայում և Իտալիայում: Այս յերկրներում վոչնչացված են բուրժուական դեմոկրատիայի վերջին մնացորդները: Ֆաշիզմի յերկրներում ընտրութեաններն իսկական կատակերգութեան են: Ընտրական շրջանները շրջապատվում են ֆաշիստական ջոկատներով, ընտրական շենքերում նստում են ֆաշիստական չինովնիկները: Ընտրողները պարտավոր են ձայն տալ միայն ֆաշիստական կուսակցութեան առաջադրած թեկնածուներին և իրավունք չունեն իրենց սեփական թեկնածուներն առաջադրելու:

Սորհրդային ընտրական որենքը խստորեն պահպանում է քվարկութեան գաղտնիութեանը: Սորհրդային ընտրողն իր բյուլետենը լրացնում է բոլորովին գաղտնի: Նա ընտրական բուլետենը փակում է ծրարի մեջ և անձամբ գցում քվարկատուփը: Սորհրդային ընտրողի վրա կողմնակի վոչ մի ճնշում գործադրել չի թույլատրվում: Ամեն վոք, ով կփորձի խանդարել ընտրողին իր ազատ ընտրական իրավունքն իրագործելու, յենթակա յե խիստ պատժի: Թեկնածուների ոգտին ամբողջ ազդեցիկան դադարում է ընտրական շենքի շեմքին հասնելուն պես: Այսպես մեր ընտրական որենքը մինչև վերջ է հետևողականորեն ապահովում է քվարկութեան գաղտնիութեանը:

Սորհրդային ընտրական որենքում նորութեան են հանդիսանում այն հոգվածները, վորոնք վորոշում են թեկնածուներ առաջադրելու կարգը: Ընտրութեանների ժամանակ թեկնածուներ առաջադրելու իրավունք է վերապահվում հասարակական կազմակերպութեաններին և աշխատավորութեան ընկերութեաններին. կոմունիստական կուսակցութեան կազմակերպութեաններին, պրոֆմիութեաններին, կոոպերատիվներին, յերիտասարդական կազմակերպութեաններին, կուլտուրական ընկերութեաններին:

Թեկնածուներ առաջադրել կարող են հասարակական կազմակերպութեանների ու աշխատավորութեան ինչպես կենտրո-

նական, հանրապետական, յերկրային, մարդային ու շրջանային որգանները, այնպես ել բանվորների ու ծառայողների, կարմիր բանակայինների, կոլտնտեսականների բնդհանուր ժողովները: Ժողովուրդն իր հասարակական կազմակերպությունների միջոցով, ձեռնարկությունների, կոլտնտեսությունների ու խորհուրդների, զորամասերի ընդհանուր ժողովներում նշում է թեկնածուներ: Թեկնածու առաջադրող յուրաքանչյուր կազմակերպություն, ինչպես և ԽՍՀՄ-ի յուրաքանչյուր քաղաքացու լիակատար հնարավորություն է տրվում ժողովներում ու մամուլում անընդհատ ագիտացիա մղել իր թեկնածուի ոգտին: Հասարակական կազմակերպությունների և աշխատավորության ընկերությունների ներկայացուցիչներից բաղկացած ընտրական հանձնաժողովները պարտավոր են հաշվառման յենթարկել այն բոլոր թեկնածուներին, վորոնք առաջադրվել են որենքում նըշված բոլոր կանոնների պահպանումով:

ԽՍՀՄ-ում ընտրությունների հետ կապված բոլոր ծախսերը կատարվում են պետության հաշվին: Այդ ապահովում է բոլոր աշխատավորների մասնակցությունն ընտրություններին, Վոչ բոլոր բուրժուազեմոկրատական յերկրներում գոյություն ունի այդպիսի դրություն: Այնտեղ, վորպես կանոն, յուրաքանչյուր թեկնածույից կամ նրան առաջադրող կազմակերպությունից պահանջվում է գրամական գրավ մուծել (որինակ՝ Անգլիայում 1500 ոտլրի): Փրանսիայում և Զեխոսլավակիայում ընտրական բյուլետենների համար կատարվող ծախսերը դրվում են թեկնածույի վրա: Դրամական գրավ մուծելու պահանջը նրա համար է սարքված, վորպեսզի դավարացվի աշխատավորների միջից թեկնածուներ առաջադրելը: Աշխատավորության թեկնածուների դեմ կապիտալիստական պետությունների վոստիկանությունը գործի յե դնում բոլոր միջոցները, սուտ մեղադրանքներ, ձերբակալություն, աքսոր:

Այս փաստերն ել բավական են, հասկանալու համար այն անսահման առավելությունները, վոր ունի մեր ընտրական որենքը բուրժուական ընտրական սիստեմների համեմատությամբ:

ԽՍՀՄ-ի Սահմանադրության բուրժուական քննադատները իրր թե դարմանում են, վոր Խորհրդային յերկրում գոյություն ունի միայն մեկ կուսակցություն—կոմունիստական կուսակցությունը, իսկ ընտրությունները վորպես թե, կարող են

տեղի ունենալ միայն յերկու կամ մի քանի կուսակցությունների պայքարի դեպքում: Խորհուրդների Համամիութենական արտակարգ 8-րդ Համագումարում «Սահմանադրության նախագծի մասին» տված իր դեկլացման մեջ ընկեր Ստալինը քննադատների այդ խմբին պատասխանեց.

«Ինչ վերաբերում է տարեր քաղաքական կուսակցությունների աղատությունը, ապա այստեղ մենք մի բիչ այլ հայացքներ ենք պաշտպանում: Կուսակցությունը դասակարգի մի մասն է, նրա առաջավոր մասը: Մի քանի կուսակցություններ, նշանակում է՝ նաե կուսակցությունների աղատություն, կարող են գոյություն ունենալ միմիայն այնպիսի հասարակության մեջ, վորտեղ կան հակամարտ դասակարգեր, վորոնց շահերը թշնամական են ու անհաշտ, վորտեղ կան, առենք, կապիտալիստներ ու բանվորներ, կալվածատերեր ու գյուղացիներ, կուլակներ ու չքավորություն և այլն: Բայց ԽՍՀՄ-ում չկան այլևս այնպիսի դասակարգեր, ինչպիսիք են կապիտալիստները, կալվածատերերը, կուլակները և այլն: ԽՍՀՄ-ում կա միայն յերկու դասակարգ՝ բանվորներն ու գյուղացիները, վորոնց շահերը վոչ միայն թշնամական չեն, այլ ընդհակառակը—բարեկամական են: Հետևաբար ԽՍՀՄ-ում հող չկա մի քանի կուսակցությունների գոյության համար, ուրեմն նշանակում է՝ նաե այդ կուսակցությունների աղատության համար: ԽՍՀՄ-ում հող կա միայն մի կուսակցության՝ Կոմունիստական կուսակցության համար: ԽՍՀՄ-ում կարող է գոյություն ունենալ միայն մի կուսակցություն—կոմունիստների կուսակցությունը, վորը խիղախորեն և մինչև վերջը պաշտպանում է բանվորների ու գյուղացիների շահերը: Իսկ վոր նա վատ չի պաշտպանում այդ դասակարգի շահերը, սրանում հազիվ թե վորեե տարակույս լինի:»

Անսահման է Լենինյան-Ստալինյան կուսակցության հեղինակությունը: Սակայն այդ ամենեին չի նշանակում, թե մենք կարող ենք հանգստանալ: Ընտրական պայքարը շատ լուրջ է լինելու: Տրոցկիստական-բուխարինական ֆաշիստական բանդիտները վոչնչացված շահագործող դասակարգերի բեկորները անկասկած փորձում են իրենց ստոր նպատակների համար ոգտագործել աշխարհիս ամենագեմեկրատիկ ընտրական որենքը: Դրա համար ել մենք պետք է տասնապատկենք մեր զգոնությունը, վորպեսզի ժամանակին մերկացնենք ժողովրդի թշնամիներին, վորքան ել նրանք վարպետորեն դիմակավորված լինեն:


Սոցիալիզմի Յերկրի ընտրական որենքը նախատեսում է ընտրությունների տյանպիսի կազմակերպում, վորը լիովին ապահովում է գեմոկրատիայի իրականացումը գործնականում և քաղաքացիներին ապահովում է քվեարկության արդյունքները կեղծելու հնարավորությունից: Չայները հաշվում է շրջանային ընտրական հանձնաժողովը հասարակական կազմակերպությունների հատկապես լիազորված ներկայացուցիչների և մամուլի ներկայացուցիչների ներկայությամբ: Գերագույն խորհրդի պատգամավոր ընտրված է համարվում այն թեկնածուն, վոր ստացել է ձայների բացարձակ մեծամասնություն, այսինքն տվյալ ոկրոգում տրված ձայների կեսից ավելին:

Ընտրությունները նոր թափ կհաղորդեն մասսաների քաղաքական ու արտադրական ակտիվությանը, ստալառնովյան շարժման զարգացմանը, ել ավելի կնպաստեն պետական ապարատի կապի ամրապնդմանը մասսաների հետ: Դրանք համաշխարհային պատմության մեջ բառիս բուն իմաստով առաջին իսկական ժողովրդական ընտրություններն են լինելու: Դրանք հզոր ցույց կհանդիսանան այն սիրո, վոր տածում է խորհրդային ժողովուրդը Լենինի—Ստալինի Կուսակցության նկատմամբ, վորի փորձված ղեկավարությամբ ձեռք են բերվել Ստալինյան մեծ Սահմանադրության մեջ գրի առնված համաշխարհային պատմական նշանակություն ունեցող հաղթանակները:

Յուրաքանչյուր պատի թերթի խմբագիր, յուրաքանչյուր խմբկոլի անդամ պետք է շատ լավ ուսումնասիրի և իմանա նոր ընտրական որենքը: Հեռու չեն նոր որենքով ընտրությունները: Հարկավոր է նախապատրաստվել դրանց: Այդ նախապատրաստությունը պետք է արտահայտվի նախ և առաջ նրանով, վոր նոր ընտրական որենքը լայնորեն բացատրվի կոլտնտեսականներին ու կոլտնտեսուհիներին: Յուրաքանչյուր քաղաքացի պետք է իմանա մեր ընտրական սխտմը, իր իրավունքները, ընտրությունների կարգը: Պատի թերթում գրեցեք, թե ձեր կուսակցական ու կոմյերիտական կազմակերպությունները, գյուղխորհուրդն ու պատգամավորներն ինչպես են քաղաքացիներին բացատրում նոր ընտրական որենքը: Հավաքեցեք կոլտնտեսականներին հետաքրքրող հարցերը: Աշխատեցեք, վոր այդ հարցերին սպառիչ պատասխաններ տրվեն: Հետեցեք, վոր ընտրական որենքի բարձրաձայն ընթերցումներ կազմակերպվեն: Պրոպագանդիստական նյութեր տպեցեք նոր ընտրական որենքի մասին: Չրույցներ կազմակերպեցեք շարքային կոլտնտեսականների ու կոլտնտեսուհիների հետ նոր ընտրական որենքի մասին: Իմացեք՝ կարողացե՞լ են նրանք այդ որենքը, լ՞ենչ բան նրանց հասկանալի, պարզ չե: Պատի թերթում լուսարանեցեք կոլտնտեսականների մի քանի յելույթներն այն ժողովներում ու խմբակներում, վորտեղ քննարկվել է նոր ընտրական որենքը:

Արթուն հակեցեք խորհրդային իշխանության դեմ թշնամաբար տրամադրված տարրերի, ֆաշիստական գործակալների—տրոցկիստների, բուխարինականների, ոիկովականների և յերկերեսանիների ու բանդիտների մեքենայություններին: Պատի թերթը պետք է մերկացնի յերկերեսանիներին՝ վճռականորեն պայքարելով մասսաներին խաբելու նրանց փորձերի դեմ:

Թող յուրաքանչյուր պատի թերթ թշնամիների մանեվրները մերկացնելով, կոլտնտեսային մասսային հասցնի կենդանի բուլշեիկյան խուքը մեր խորհրդային ընտրական որենքի՝ աշխարհիս ամենադեմոկրատական ընտրական որենքի մասին:



Քարզմ. Հ. Հարությունյան
Խմբ.՝ Ա. Պետրոսյան
Արբանյակի և Պետրոսյան

Գրադիր № 811

Պատվեր № 301, տիպ 2000

«Խորհրդային Հայաստան»-ի հրատ. տպարան, Յերևան



ՏՐԿՈՒՄ Ե ԶԵԽ

540

11

29017

9 ДЕК 1937

Самый демократический избирательный закон

(Отрывок из 7-ой лекции)

Издательство „Хорурдани Айастан“ Ереван, 1937 г.